ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5
«ՍԹՊ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 24 դեկտեմբերի 2018թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ամիրյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Հարությունյան
Տ.Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Գրիգորյան

1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>
(Ա.Ամիրյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկություններիգնահատման մասին
3. Մերժված հայտի մասին:
4. Բանակցությունների կազմակերպման մասին
5. Պայմանագիր կնքելու որոշման մասին
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. <u>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունների գնահատման մասին</u>
(Ա.Ամիրյան)

Ընդունել ի գիտություն, որ 20.12.2018թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ <<ՋԻ ԹԻ ՍԻ>> ՍՊԸ-ի, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 5697 ՀՀ դրամի չափով, ինչը գերազանցում է Հրավերի 2-րդ մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետանց պարտավորությունների չափը:

«ՍԹՊ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին են ներկայացվել սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկտում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	<u>Ընտրված մասնակից ճանաչել՝</u>	
1	<<Արֆարմացիա>> ՓԲԸ	1,2,13,27,28,42,57,59,61,71,79,93,100,101

ProTender©
www.protender.am

2	<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ	5,14,15,17,19,21,24,25,26,34,35,36,38,40,45,47,48,49,55,63,64, 68,73,74,81,84,85,86,87,90,94,95,102,104,106,2.2,2.3,2.4,2.6,2.7, 2.9,2.10,2.11,2.12,2.13,2.14,2.16,2.17,2.18,2.20,2.21,2.22,2.23,2.24
3	<<Դեզսերվիս>> ՍՊԸ	52,70,89
Երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել՝		
1	<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ	1,2,27,57,59,61,70,71,79,88,89,100
2	<<Արֆարմացիա>> ՓԲԸ	5,34
3	<<Դեզսերվիս>> ՍՊԸ	25,26,36,84,87,96,102

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Մերժված հայտի մասին
(Ա.Ամիրյան)

Հիմք ընդունելով 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետը, Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել <<ՋԻ ԹԻ ՍԻ>> ՍՊԸ -ի հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Բանակցությունների կազմակերպման մասին
(Ա.Ամիրյան)

Քանի որ 7,10,82 չափաբաժինների համար հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում են նախատեսված ֆինանսական միջոցների չափը , ուստի հանձնաժողովը որոշել էր.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի համաձայն վերը նշված չափաբաժինների համար հաղթողին որոշելու նպատակով կասեցնել հայտերի բացման նիստը և առաջարկված գների նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել ս.թ. 26.12.2018թ-ին ժամը 10:30-ին, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

(Ա.Ամիրյան)

Բացառությամբ՝ 7,10,82,88,96 չափաբաժինների՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

6. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

(Ա.Ամիրյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել բանակցությունների վարման օրը <<Սարի Թաղ>> Պոլիկլինիկա ՓԲԸ, ք.Երևան, Սարի թաղ , 10 փող.112 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ամիրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Հարությունյան

Տ.Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Գրիգորյան